



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ**

**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

***N3 (77) մայիս 21 – հունիս 20***

**28 հուլիսի 2015**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ.....	3
1.1 ՀՀ օրենքներ.....	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ.....	7
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ.....	9
2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ.....	11
2.1 Այնպիսի գանգատարկումների և ծառայողական քննությունների .....	11
2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ.....	11

# 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

## 1.1 ՀՀ օրենքներ

Փաստաթուղթ	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27.05.2015թ, ՀՕ-34-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 32 (1121), 03.06.2015թ
Ուժի մեջ է	04.06.2015

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացման համաձայն սահմանվել է, որ **անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝** պարտադիր դրոշմավորման ենթակա **ապրանքներ իրացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը** կարող են մինչև ՀՀ օրենքներով սահմանված՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման իրացնելու վերջնաժամկետները ՀՀ կառավարության սահմանած կարգով դրոշմավորել իրենց մոտ առկա՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների գույքագրված մնացորդները:

Սույն մասով սահմանված դեպքերում անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ կիրառվում են պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով և դրոշմապիտակների համակարգի կիրառությունն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգավորումները, եթե վերջիններիս մասով օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Փաստաթուղթ	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27.05.2015թ, ՀՕ-35-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 32 (1121), 03.06.2015թ
Ուժի մեջ է	04.06.2015

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2014 թվականի նոյեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված վիտամինների, պատվաստանյութերի, դեղերի և օժանելիքի իրացումը թույլատրվում է մինչև 2015 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

Փաստաթուղթ	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և
------------	--

	լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27.05.2015թ, ՀՕ-36-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 32 (1121), 03.06.2015թ
Ուժի մեջ է	13.06.2015

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացման համաձայն սահմանվել է, որ այն հարկային գործակալը, որը ՀՀ ռեզիդենտների հետ կնքել է աշխատանքային պայմանագիր, և այդ պայմանագրի հիման վրա աշխատողը աշխատանք է կատարում բացառապես ՀՀ տարածքից դուրս, ապա «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի 1.2-րդ մասով նախատեսված ծրագրերի իրականացման շրջանակներում աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից **եկամտային հարկը հաշվարկվում է 13 տոկոս դրույքաչափով:**

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27.05.2015թ, ՀՕ-37-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 32 (1121), 03.06.2015թ
Ուժի մեջ է	13.06.2015

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացման համաձայն սահմանվել է, որ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող և այդ ծրագրում ընդգրկված՝ ՀՀ ռեզիդենտ հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողի կամ ռեզիդենտ հարկ վճարողի **շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 5 տոկոս դրույքաչափով,** եթե վերջին(ներ)ս գործունեություն է (են) իրականացնում **շինարարության կամ շինմոնտաժային ոլորտում** և բացառապես ՀՀ տարածքից դուրս:

Փաստաթուղթ	«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.05.2015թ, ՀՕ-38-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (1122), 10.06.2015թ
Ուժի մեջ է	2015 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն սահմանվել է, որ **շրջանառության հարկ վճարող կարող են համարվել անձինք,** որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի (այսուհետ՝ իրացման շրջանառություն), **չի գերազանցել 115.0 մլն դրամը:**

**Առևտրական (առք ու վաճառքի) գործունեության** համար շրջանառության հարկի դրույքաչափը սահմանվել է **5%**՝ նախկինում գործող 1% դրույքաչափի փոխարեն:

Միաժամանակ, սահմանվել է, որ հաշվետու ժամանակաշրջանի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում անմիջական վաճառքի նպատակով **ձեռք բերված ապրանքների գծով կատարված ծախսերի՝** ՀՀ օրենսդրությամբ սահմանված երկկողմանի հաստատված (վավերացված) հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (ներառյալ՝ անուղղակի հարկերը), ինչպես նաև ՀՀ ներմուծված ապրանքների մասով ներմուծման հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի և հաշվարկված անուղղակի հարկերի հանրագումարի կամ ավելացված արժեքի հարկով հարկման բազայի ու հաշվարկված ավելացված արժեքի հարկի հանրագումարի **4 տոկոսը կազմող գումարի չափով:**

Եթե նախատեսված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկված **1.5 տոկոսից**, իսկ 2015թ. հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ **1 տոկոսից պակաս գումար**, ապա առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների համար շրջանառության հարկը հաշվարկվում է **հարկվող օբյեկտի նկատմամբ 1.5 տոկոս**, իսկ **2015թ. հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1 տոկոս** դրույքաչափով:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.05.2015թ, ՀՕ-39-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (1122), 10.06.2015թ
Ուժի մեջ է	2015 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացման համաձայն սահմանվել է, որ հարկային մարմնի կողմից իրականացվող **կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում** «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջների խախտում արձանագրվելու դեպքում (տես «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի մեկնաբանությունը) **արձանագրությամբ խախտում կատարած** հաշվետու ժամանակաշրջանների համար **շրջանառության հարկի ճշտված հաշվարկներ չեն կարող ներկայացվել:**

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.05.2015թ, ՀՕ-40-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (1122), 10.06.2015թ

Ուժի մեջ է	2015 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ
------------	---

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումների համաձայն սահմանվել է, որ եթե հարկային մարմնի կողմից իրականացվող կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ շրջանառության հարկ վճարողը որևէ հաշվետու ժամանակաշրջանում **խախտել է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջները** (տես «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի մեկնաբանությունը), ապա հարկային մարմինը վերադաս **հարկային մարմնի սահմանած ձևով խախտման վերաբերյալ կազմում է արձանագրություն**, որում նշվում են՝

- 1) արձանագրության համարը, կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- 2) ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձանց պաշտոնը, անունը, ազգանունը,
- 3) տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,
- 4) հաշվետու ժամանակաշրջանը (ժամանակաշրջանները), որի (որոնց) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է խախտում,
- 5) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջների խախտման նկարագիրը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.05.2015թ, ՀՕ-41-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (1122), 10.06.2015թ
Ուժի մեջ է	2015 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն սահմանվել է, որ **«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով** սահմանված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու համար ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման **իրացման շրջանառության չափը** (որը «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն սահմանվել է 115.0 մլն դրամ) սույն օրենքի կիրառման առումով **համարվում է ԱԱՀ-ի շեմ**, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների և սույն օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերի՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, որոնց համար սույն օրենքի կիրառման առումով ԱԱՀ-ի շեմ է համարվում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման շրջանառության 58,35 մլն դրամը:

Փաստաթուղթ	«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	30.05.2015թ, ՀՕ-41-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (1122), 10.06.2015թ
Ուժի մեջ է	2015 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ

**Համառոտ նկարագիր**

Օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ **ուժը կորցրած է ճանաչվել** «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-156-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-3 պարբերությունները, որը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հավելվածը ուժը կորցրած ճանաչելու հետ:

**1.2 ՀՀ կառավարության որոշումներ**

Փաստաթուղթ	«Կապի կամ հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքերում այլ ուղեկցող փաստաթղթերի և կապի խափանումները վերացնելուց հետո նախկինում դուրս չգրված ուղեկցող փաստաթղթերի դուրսգրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
------------	--

Ամսաթիվը և համարը	04.06.2015թ, N 594-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (1123), 17.06.2015թ
Ուժի մեջ է	18.06.2015թ

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է կապի կամ հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքերում այլ ուղեկցող փաստաթղթերի և կապի խափանումները վերացնելուց հետո նախկինում դուրս չգրված ուղեկցող փաստաթղթերի դուրսգրման կարգը:

Փաստաթուղթ	«Կապի խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմնին տրամադրելու գործընթացում ՀՀ կառավարության լիազոր մարմին ճանաչելու, ինչպես նաև կապի խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և հրապարակման կարգերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	04.06.2015թ, N 595-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (1123), 17.06.2015թ
Ուժի մեջ է	18.06.2015թ

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է.

1. կապի խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը կապ տրամադրող կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարության լիազոր մարմնին տրամադրվելու և այդ տեղեկատվությունը լիազոր մարմնի կողմից հարկային մարմնին տրամադրվելու կարգը,

2. հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմնի կողմից հրապարակվելու կարգը:

Կապի խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմնին տրամադրելու գործընթացում ՀՀ կառավարության լիազոր մարմին ճանաչվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

Փաստաթուղթ	«Ժամանակավոր պահպանության պահեստներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	04.06.2015թ, N 592-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (1123), 17.06.2015թ
Ուժի մեջ է	27.06.2015թ

### Համառոտ նկարագիր



Որոշմամբ սահմանվել է ժամանակավոր պահպանության պահեստներին ներկայացվող պահանջները:

Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրին ուժի մեջ մտնելուց հետո ժամանակավոր պահպանման պահեստների կազմակերպիչների գործունեության մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	21.05.2015թ, N 597-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (1123), 17.06.2015թ
Ուժի մեջ է	18.06.2015թ

### Համառոտ նկարագիր

Որոշման համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին Հայաստանի Հանրապետությանը միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի ուժի մեջ մտնելու պահի դրությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային հսկողության տարածքի կազմակերպման գործող լիցենզիա ունեցող անձինք կճանաչվեն որպես ժամանակավոր պահպանման պահեստի կազմակերպիչներ՝ պայմանագրին ուժի մեջ մտնելուց հետո 18 ամիս ժամկետով:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի N387-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	18.06.2015թ, N 639-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 35 (1124), 18.06.2015թ
Ուժի մեջ է	19.06.2015թ

### Համառոտ նկարագիր

Որոշման համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1.1 մասով սահմանված ՀՀ կառավարության հավանությանն արժանացած արտահանման ծրագրերի և 1.2 մասով սահմանված բացառապես ՀՀ տարածքից դուրս շինարարության կամ շինմոնտաժային ոլորտում իրականացվող ծրագրերի համար հաստատվել են առանձին կարգեր:

Սահմանվել է նաև, որ ՀՀ տարածքից «արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի նվազագույն մեծությունը որոշվում է ՀՀ կողմից՝ առանձին ծրագրերի համար:

## 1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական միության անդամ
------------	--------------------------------------

	պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների ավելացված արժեքի հարկով և (կամ) ակցիզային հարկով հարկման բազաների, հաշվարկված հարկի գումարների վերաբերյալ ծանուցագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	17.04.2015թ, N 235-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 13 (525), 22.05.2015թ.
Ուժի մեջ է	02.06.2015

### **Համառոտ նկարագիր**

Հրամանով հաստատվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների ավելացված արժեքի հարկով և (կամ) ակցիզային հարկով հարկման բազաների, հաշվարկված հարկի գումարների վերաբերյալ ծանուցագրի ձևը:

## 2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

### 2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.05.2015թ-ից մինչև 20.06.2015թ-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 18 որոշում, որից բավարարվել է 8, մերժվել է 9, կասեցվել է 1 որոշում:

20.05.2015թ-ից մինչև 20.06.2015թ-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 4 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 4 ծառայողներ ենթարկվել են տարբեր տեսակի կարգապահական պատասխանատվության:

### 2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ<sup>1</sup>

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	Հաշվետու տարի 2015		
			Հունիս	Հունվար-Հունիս	Աճի տեմպ %
1	ՀՀ ՖՆ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	90,796.1	500,521.3	100.2
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում	մլն դրամ	87,012.2	485,427.0	100.5
1.1.1	ԱԱՀ, այդ թվում	մլն դրամ	32,782.5	192,641.6	94.2
1.1.1.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	5,056.3	17,281.3	-
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	12,317.0	59,737.9	96.3
1.1.3	Եկամտային հարկ	մլն դրամ	26,763.0	147,723.9	105.7
1.1.4	Ակցիզային հարկ, այդ թվում	մլն դրամ	4,040.0	21,044.3	102.3
1.1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	357.1	1,403.9	-
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	728.5	5,170.4	67.8
1.1.6	Արտոնագրային վճար	մլն դրամ	705.6	3,301.8	98.0
1.1.7	Հաստատագրված վճար	մլն դրամ	283.2	1,581.2	48.1
1.1.8	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	մլն դրամ	2,330.3	13,207.1	109.8
1.1.9	Մաքսատուրք, այդ թվում	մլն դրամ	5,331.7	30,355.8	124.3
1.1.9.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	մլն դրամ	5,058.3	24,520.6	-
1.1.10	Նպատակային սոցիալական վճար	մլն դրամ	910.5	4,924.8	-
1.1.11	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	819.9	5,738.2	104.2
1.2	Պետական տուրք	մլն դրամ	3,783.9	15,094.3	92.4

<sup>1</sup> Ներառված են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով եկամուտները

**2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ**

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2015թ. հունիս
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1897
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1474
1.2	Իրավաբանական անձ	հատ	423
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	-
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	146
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	698.1
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	<b>2015թ. հունվար-հունիս</b> 8639
5.1	Բավարարված	հատ	364
5.2	Մերժված	հատ	10
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	5453
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլրդ դրամ	5.944
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	14649
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	261,9
8	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	1342
8.1	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլրդ դրամ	3.645
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված	հատ	77

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2015թ. հունիս
	քրեական գործերի թիվ		
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	795,8
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	532
10.1	Ավարտված	հատ	14
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	14
10.3	Կասեցված	հատ	11
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլրդ դրամ	2.677